«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Ազգագային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում*

Հաստատություն ՝ *Երևանի թիվ 97 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ*

Դաստիարակ ՝ *Սարգսյան Նարինե*

Ղեկավար ՝ *Ավետիսյան Ժաննա*

Երևան 2023

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2. Ծեսեր, ծիսական գործողություններ 4

3. Ազգային տոներ.....5

Տյառնընդառաջ.....6

Բարեկենդան.....7

Ծաղկազարդ.....8

Զատիկ.....9-10

Համբարձման տոն.....11

Ղափամայի ծես.....12

Բերքի տոն-Թթուդրիկ.....13-14

4. Եզրակացություն.....15

5. Գրականություն.....16

Ներածություն

Ի՞նչ է ծեսը, ծիսակարգը և սովորույթը: Դրանց դերն ու նշանակությունը.

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրանց նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Կարող ենք առանձացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը :

Ծեսը ավանդական կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ :

Ծեսը նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատ-կությունները: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը՝ կյանքի և գործունեության կարևոր պահին:

«Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որի ունի արարողական բնույթ:

Օրինակ ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են Վարդավառին:

Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ըստ Ա.Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»:

Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակագործնական բնույթ: Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց հիմնական բաղադրիչներով խիստ պահպանողական: Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը, նվերները ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք առկա են բոլոր տոներում:

Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգեվոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն ՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն:

Ծեսեր, ծիսական գործողություններ

Նախակրթարանում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի տեսքով: Երեխան դաստյարակվում և սովորում է յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթոջախը:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք:

Նախակրթարանում երեխաները.

- սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, օրհնանքներ,
- նկարում են

ա. ծիսական հերոսներին,

բ.ծիսական պարագաներ,

- պատրաստում են ծիսական պարագաներ դաստյարակի, ծնողի օգնությամբ,
- խաղարկում են ծիսական խաղեր,
- բեմականացնում են երգեր,
- կատարում են բնագիտական փորձեր,
- գնում են ուսումնական ճամփորդության,
- հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք,
- վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Երեխան քայլ առ քայլ ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով յուրացնում է ծեսը:

Նախակրթարանում իրականացվող ծեսերը պայմանականորեն կարող են բաժանվել երկու մեծ խմբի՝ հայ ավանդական և սովորույթներ: Սովորույթը շատ ավելի կապված է առօրյա կյանքի հետ, քան արարողությունն ու ծեսը:

Նախակրթարանում ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում,
- ծիսակատարություն։

Ազգային ծեսեր

Ազգային տոներն ու ծեսերը, ծիսական միջոցառումները սկսվում են նոր տարվա ծեսից։ Տոնն ունեցել է տարբեր անուններ՝ Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալանտար, Կալոնտար։

Սուրբ Ծնունդ-Նոր տարի

Նախակրթարաններում Սուրբ Ծննդյան ծեսը սկսում ենք երգեր ու պարեր սովորելով։ Միասին սովորում ենք ավանդական, ծիսական երգեր, պարերգեր՝ ծանոթանալով ամեն մի երգի, պարի պատմությանը։ Երեխաները հատուկ ջերմությամբ ու հուզմունքով են վերաբերվում այս հրաշք տոնին։ Ամանորին պատրաստվում են շատ մանրակրկիտ հավատարիմ մնալով դարերից եկող հատուկ ավանդույթներին։

Հայկական ավանդական ամանորի մասին խոսելիս առաջին հերթին պետք է հասկանալ, թե որ ժամանակաշրջանի նոր տարվա մասին են խոսում՝ Նավասարդի, որը նշում էին օգոստոսին, Նախրաթողի, որը նշում են հոկտեմբերին կամ Ամանորի, որը 18-րդ դարից նշում ենք հունվարի մեկին։ Այս տոնը հայերի համար նշանավորում էր տարվա ավարտը և հաջորդ տարվա սկիզբը և ներառում էր մի շարք ժողովրդական ծեսեր։

Նոր տարուն հաջորդում են Ծնունդ (Աստվածահայտնություն), Զրօրհնեք (Մկրտություն) տոները: Մեր եկեղեցին Սուրբ Ծնունդը նշում է հունվարի 6-ին: Այդ օրը մատուցվում է պատարագ, և մարդիկ իրար ողջունում են՝ ասելով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, օրհնյալ է Ծնունդը Քրիստոսի»:



Տյառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին Տյառնընդառաջը տոնում է փետրվարի 14–ին, Քրիստոսի ծննդից՝ հունվարի 6-ից քառասուն օր հետո: Այն անշարժ տոն է:

Երբ Մարիամն ու Հովսեփը քառասն օրյա Հիսուսին բերում են տաճար, ընդառաջ է գալիս Տիրոջ գալստյանն սպասող Սիմեոն ծերունին, գրկում մանկանը և գոհություն ու փառք տալիս Աստծուն, որ իրենն արժանի դարձրեց Փրկչին տեսնելու: Այստեղից էլ տոնի անունը «Տեառնընդառաջ»՝ Տիրոջն ընդառաջ: Տոնական հանդիսությունները, սակայն ունեն հնագույն ավանդույթներ և առնչվում են կրակի մաքրագործող զորության հանդեպ ունեցած հավատի հետ: Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ՝ բաժանում են մոմեր, և եկեղեցականը վառում է սեղանի վրա դրված մոմերը: Ժամերգությունից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը և տանում տուն: Եկեղեցական արարողությունից հետո, հինավուրց սովորության համաձայն, եկեղեցու բակում կրակ է վառվում: Երիտասարդները վառած մոմերով վերադառնում են տուն, վառում նախօրոք պատրաստված փոքրիկ դեզերը և թռնում վրայով: Դեզը վառելու միջոցին հրացաններով կրակում են, որոնց ձայնից շները վախենում են և մի կողմի վրա փախչում: Այդ ընթացքում շատերը բակի խարույկից թիակով կամ որևէ ամանով կրակ էին վերցնում և պտտեցնում տան շուրջը: Մեծ

կարևորություն ուներ նաև Տյառնընդառաջի խարույկի մոխիրը: Այն, ըստ պատկերացումների, օժտված էր բուժող ու առատացնող զորությամբ:

Տերընդեզ դարմանը կես,
Առ հաց ու կես ելիր գեղես:
Տերընդեզ մխի դին տես
Մե փութ ցանես, հազար քաղես:
Տրընդեզ փեշդ վառե,
Որ ազատվես օձե չարե:
Տերընդեզ մխի դին տես
Մե փութ ցանես, հազար քաղես:

Բարեկենդան

Բարեկենդանն այնքան սիրված, ժողովրդական, սպասված տոն էր, որ հայ ազգի կողմից այն ընկալվում էր որպես ամենաազգային («հայոցազգիօրեր»), ինչպես նաև ամենաերջանկաբեր, խրախճանք, ճոխու առատ ուտելիքներ վայելելու տոն, պարերի, խաղերի, զվարճահանդեսների, թատերախաղերի, այցելությունների և ուրախության երկու շաբաթ: Բուն Բարեկենդանի նախորդ օրը, Շաբաթ երեկոյան, ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածկվում է, և այսպես շարունակվում է քառասունօրյա պասի ընթացքում: Պասի ժամանակ մատուցվում է փակ պատարագ. ամուսնություններ տեղի չեն ունենում, արգելվում է մատաղ անել, մինչ թույլատրվում է մկրտություն և նշանդրեք կատարել:

Մեծ Պահքի (պաս) ամեն կիրակին ուներ իր առանձին տոնատերը: Առաջին կիրակին նվիրված էր Արտաքսմանը, երկրորդը՝ Անառակին, երրորդը՝ Տնտեսին, չորրորդը՝ Դատավորին, հինգերորդը՝ Գալստյան, վեցերորդը՝ Ծաղկազարդին և յոթերորդը՝ Քրիստոսի հարությանը: Պասի ընթացքում կենդանական ծագում ունեցող սնունդ չէին ուտում, այլ միայն բուսական:

Բարեկենդան նշանակում է բարիկենդանություն: Այն ուրախության ու զվարճանքի օր է, հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը, երբ նրանք ապրում էին վայելքի ու անհոգության մեջ:

Նախկինում դրանք հեթանոսական տոնախմբությունների օրեր էին, կատարվում էին փետրվարին կամ մարտի սկզբին: Տոնը հավանաբար կապ ուներ գարնան սկսվելու հետ: Եվ պատահական չէին զվարճությունները, որոնք արթնացող բնությանը ուրախ դիմավորելու, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին: Մարդիկ մաղթում էին միմյանց բարի կենդանություն: Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքի նախորդող շաբաթվա տոն, որը նշվում էր կեր ու խումով, մասսայական խաղերով, մրցումներով, թատերախաղերով, պարերով և այլն: Այն տևում էր երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Ս. Սարգսին և ավարտվելով Մեծ պասով: Մեծ պահքին նախորդող կիրակին Բուն Բարեկենդանի օրն էր: Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոսը: Նա անապատում 40 օր է անցկացրել: Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ պահքը: Մեծ պահքի 40 օրերին գումարվել է նաև Զատիկին նախորդող 9 օրերը, և այն տևում է 49 օր: Մեծ պահքն ավարտվում է Զատիկի՝ Քրիստոսի Հարության տոնով:

Ծաղկազարդ

Ծաղկազարդ (ծառզարդար, ծառկոտրուկ), գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն, որին հաջորդում է Ավագ շաբաթը: Կատարվում է Զատկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»:

Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ: Դրանց վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական զորություն:

Ծաղկազարդի երեկոյան կատարվում է Դռնբացեքի արարողությունը, որի ընթացքում, «Բաց մեզ, Տէր զդուռն ողորմութեան» շարականի ներքո բացվում են եկեղեցիների խորանների վարագույրները՝ խորհրդանշելով Տիրոջ երկրորդ գալուստը, աշխարհի վախճանը և Վերջին դատաստանը:

Ծաղկազարդը եղանակի՝ գարնան պաշտամունքի տոն էր: Այն նվիրված էր ոչ միայն ջրին, այլև ծառին ու ծաղկունքին: Ծառի պաշտամունքը փոխանցվել է սերնդեսերունդ և համարվել բնության կենդանության ու վերապրումի արգասիք: Տոնի հիմքում ընկած է նաև Կենաց ծառի գաղափարը: Այն շեշտում է կյանքի վերընթաց զարգացումը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերություն: Դրա բարձրագույն նպատակը անմահությունն է:

Աստվածաշնչի մեջ կարդում ենք. «Եվ Տեր Աստված արևելյան կողմը՝ Եդեմի մեջ, պարտեզ տնկեց՝ «Եդեմի պարտեզը», ու իր շինած մարդը հոն դրեց: Եվ Տեր Աստված պարտեզին մեջտեղը Կենաց ծառը՝ Բարին ու Չարը գիտենալու ծառն էլ բուսցուց»: Քրիստոնեության շրջանում վերաիմաստավորված կենաց ծառը նույնացվել է Աստվածածնի հետ, այն առնչվում է խաչի, խաչափայտի, դրախտի հետ:

Զատիկ

Զատիկ կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոն՝ քրիստոնյա եկեղեցիների, այդ թվում նաև Հայ Առաքելական Եկեղեցու հնագույն և գլխավոր տոնը, հինգ տաղավար տոներից մեկը:

Քրիստոնյաներն իրար ողջունում են, ասելով.

-Քրիստոս յարեաւ ի մեռելոց…
-Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:

Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու ամենասպասված տոնն է, որը եկեղեցական օրացույցով (325թ. Նիկիայի տիեզերաժողովի որոշմամբ) կատարվում է գարնան գիշերահավասարից և լիալուսնից հետո եկող առաջին կիրակին: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 –ից մինչև ապրիլի 25 -ը:

Զատիկին նախորդող շաբաթը կոչվում է Ավագ (մեծ) շաբաթ, որտեղ ամփոփված է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի ամենակարևոր շրջանը՝ուսուցումները, չարչարանքները, մահն ու հարությունը:

ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ՝ նվիրված է երկնքի ու երկրի արարչագործությանը:

ԱՎԱԳ ԵՐԵՔՇԱԲԹԻ՝ նվիրված է տաս կույսերի առակին:

ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ՝ օծում և մատնություն:

ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՝ առավոտյան մատուցվում է Սուրբ Պատարագ ՝ ի հիշատակ վերջին ընթրիքի ժամանակ Քրիստոսի կողմից հաղորդության խորհրդի հաստատման:

ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ՝ այս օրը եկեղեցին հիշատակում է Քրստոսի չարչարանքները, խաչելությունն ու թաղումը:

ԱՎԱԳ ՇԱԲԱԹ՝ շաբաթ երեկոյան կատարվում է Զատիկի՝ Սուրբ Հարության Ճրագալույցի պատարագ, երբ տրվում է Քրիստոսի Հարության ավետիսը, որով և ավարտվում է Մեծ պահքը:

Նախակրթարաններում նույնպես տոնվում է Զատիկի տոնը: Այն ուրախ և զվարթ տոն է երեխաների համար: Ներկված հավկիթներով հավկթախաղ է տեղի ունենում երկու երեխայի միջև: Կոտրող հավկիթի տերը հաղթող է ճանաչվում:

Զատիկի տոնակատարության պլան (միջին խումբ)
Թեմա՝ Զատիկ
Տեսակը՝ զրույց(ծանոթացում զատկի տոնի հետ)
Նպատակը: Ընդլայնել երեխաների պատկերացումները հայկական ավանդական տոների վերաբերյալ
Նախապատրաստական աշխատանք՝ նախապես անցկացվում են զրույցներ տոնի մասին նրա խորհուրդի մասին
Անհրաժեշտ նյութեր՝ զատկական պարագաներ(ներկած ձու, կանաչիներ, քաղցրավենիքներ և այլն)
Ընթացքը՝ պարապմունքը սկսվում է զատիկի վերաբերյալ երգերով, ամփոփվում հարցերով

Երեխաները առած-ասացվածքներով և երգերով տոնում են այս գեղեցիկ տոնը:

Կարմիր արև քեզ, ախպեր,
Աստծու բարև քեզ ախպեր:

Կարմիր եզին օղն ու կոճակ,
Կարմիր հավկիթս դուրս բերեք,
Ճերմակ հավկիթս ներս տարեք:

Տի՜զ տի՜զ, Ակլատիզ,
Մազդ բիզ-բիզ, Ակլատիզ,
Պասը գնաց, Զատիկն եկավ,
Այծն էլ խոտը կերել է:

Զատկեզատի՜կ է, նավակատի՜կ է, չամչեհատի՜կ է:
Ունեցողի համար ամեն օր Զատիկ է:
Զատիկն առանց ձվի չի լինի:
Հավը կուտե հատիկ-հատիկ, ծով ձմեռեն կելնի Զատիկ:
Ակլատիզը փետելով զատիկը շուտ չես բերի:

Համբարձման տոն

Համբարձման տոնը կատարվում է Հարության կիրակիից՝ Զատիկից քառասուն օր անց և, պայմանավորված լինելով Զատիկով, բնականաբար, այն շարժական է և ամեն տարի տարբեր օրեր է նշվում: Սակայն այն միշտ տոնվում է հինգշաբթի:

Քրիստոսն իր գալուստով մաքրեց ու օրհնեց անեծքով դատապարտված արարածներին: Մկրտվելով ջրում և թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Նա մարդկային բնությունը միավորեց Աստծո Խոսքին:

Համբարձման գիշերվա վերաբերյալ ամենուր տարածված էր Լեյլիի ու Մեջլունի հանդիպման առասպելը: Ծնողների պատճառով իրենց մուրազին չհասած սիրահար զույգը՝ Լեյլին ու Մեջլունը խնդրում են Աստծուն իրենց աստղ դարձնել և իր մոտ՝ վերև տանել:

Ժողովուրդը Համբարձման տոնին դուրս էր գալիս դաշտերը, ծաղկազարդ վայրերում կազմակերպում էին զբոսանք, երգ ու պարով ուրախությամբ նշում համբարձման տոնը:

Համբարձման տոնի անբաժան մաս էին կազմում ուխտագնացությունները: Յուրաքանչյուր բնակավայր ուներ Համբարձման իր ուխտավայրը:

Ղափամայի ծես

Ղափամայի ծեսը հայկական ավանդական տոն է, որը նշվում է նաև նախակրթարանում: Այս տոնի մասին հայերը ունեն լեգենդ: Ըստ նրա՝ դդումը համարվում է երկրագունդը, բրինձը՝ համայն մարդկությունը, չրերը և ընկուզեղենը տարբեր հավատքի մարդիկ են: Այս լեգենդի խորհորդն այն է, որ երկրագունդն այնքնան փոքր է, որ բոլորը պետք է իրար հետ խաղաղ ապրեն:

Ղափամայի ծեսը նույնպես սիրելի է երեխաների համար: Այն «քաղցրահամ է ու մեղրանուշ»: Ղափամայի պատրաստումը կատարվում է խմբային ու սիրով: Այն ծիսական կերակուր է և խորհուրդը խաղաղությունն է: Ղափամայի պատրաստման ծեսը սկսվում է երգով ու գովքով: Համ երգում են, համ պատրաստում ղափաման:

Երեխայի միջոցով ծեսը մտնում է ընտանիք:

Բերքի տոն-Թթուդրիկ

Բերքի տոնն ու թթուդրիկը շատ հետաքրքիր տոններ են երեխաների համար։ Յուրաքանչյուր երեխա բանջարեղեն է բերում՝ վարունգ, գազար, լոլիկ, սխտոր, կանաչի և այլն։ Թթուդրիկի գործողությունը կատրվում է միասին։ Միասին լվանում են, կտրատում և գեղեցիկ դասավորում տարաների մեջ։ Բանջարեղեններից պատրաստում են թթու-կերպարներ և թթու-դեմքեր։ Պատրաստում են աղաջուր և սպասում թթվելուն։ Այս ամենը կատարելու ընթացքում երեխաները երգում են «Եկեք ծեծենք…» երգը».

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր,

Ինչով ծեծենք,

Ոտքով ծեծենք։

Ոտքով, ոտքով, ոտքով ծեծենք:

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր,

Ինչով ծեծենք,

Ձեռքով ծեծենք:

Ձեռքով, ձեռքով, ձեռքով ծեծենք:

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր,

Ինչով ծեծենք,

Ծնկով ծեծենք:

Ծնկով, ծնկով, ծնկով ծեծենք:

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր,

Ինչով ծեծենք

Ուսով ծեծենք:

Ուսով, ուսով, ուսով ծեծենք:

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր,

Ինչով ծեծենք,

Քթով ծեծենք,

Քթով, քթով, քթով ծեծենք:

Եկեք ծեծենք սոխ ու սխտոր,

Ինչով ծեծենք,

Գլխով ծեծենք,

Գլխով, գլխով, գլխով ծեծենք:

Եզրակացություն

Ազգային տոները, ծեսերը, ծիսական խաղերը երեխաների համար շատ կարևոր ու պահանջարկ ունեցող նյութեր են։
Ազգային ծեսերը նախակրթարանում իրականացնելը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ արդյունավետ է։ Այն նպաստեց երեխաների բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը։ Ինչպես նաև ձեռք բերեցինք խմբով աշխատելու ինքնակազմակերպման հմտություններ։ Զարգանում է նաև գեղարվեստական ճաշակը։

Այս ամբողջ գործողությունը նպաստեց նրան, որ երեխաները սովորեցին երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր, պատրաստեցին ծիսական պարագաներ, խաղացին մանկական ծիսական խաղեր։

Ես կարծում եմ, որ երեխաները կդառնան ծեսը փոխանցող, կրող և իմացող։

Որպես դաստիարակ շատ եմ կարևորում նախակրթարաններում երեխաներին ծանոթացնել ազգային տոներին և ծեսերին, նրանց ներգրավել միջոցառումներին։

Գրականություն

- https://tatevsahakyanblo HYPERLINK "https://tatevsahakyanblog.wordpress.com/"g HYPERLINK "https://tatevsahakyanblog.wordpress.com/".wordpress.co HYPERLINK "https://tatevsahakyanblog.wordpress.com/"m
- Մկրտչյան Ս.- «Տոներ, Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավատալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե. 2010թ.
- «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան- «40 օրվա խորհուրդ», Վահրամ քահանա Մելիքյան
- «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան- Երևան 2002թ.
- https://amalyavarosyanmskh.wordpre HYPERLINK "https://amalyavarosyanmskh.wordpress.com/"s HYPERLINK "https://amalyavarosyanmskh.wordpress.com/"s.com